

ԱՐՏԱՇԱՏԻ ԺՈՂՈՎՔԸ ԵՒ ԱՆՈՐ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԸ

(Շար. տե'ս Բազմավեպ 1951, թիւ 9-10 էջ 256)

ԺՈՂՈՎԱԿԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐՈՒ
ՊԱՏՈՒԱՆՈՒՆՆ ԵՒ ԿԱՐԳԸ

Եղիշէ եպիսկոպոսներու անունները արձանագրելու մէջ ալ բոլորովին կը դարտողի Ղազարէն: Փարպեցիին կ'ըսէ. «Ժողովեցան այնուհետեւ... սուրբ եպիսկոպոսներ որք են այսոքիկ. սուրբն Յովսէփ... տէր Անանիա սինեայ եպիսկոպոս, տէր Մուշէ Արծրունեայ եպիսկոպոս... սուրբն Սահակ Ռչտունեայ եպիսկոպոս...» եւն.⁽²¹⁾ Ժինչ Եղիշէ՝ «Անունը եպիսկոպոսացն որք պատասխանեցին նամակին. Յովսէփ եպիսկոպոս Այրարատոյ, Սահակ եպիսկոպոս Տարօնոյ..., Անանիա եպիսկոպոս Սինեայ..., Սահակ եպիսկոպոս Ռչտունեայ...» եւն.⁽²²⁾:

Արդ, Եղիշէի եպիսկոպոսներն յիշելու եղանակը, ինչպէս կը տեսնուի, վաւերաթուղթի մը մէջը բերութեան ազդեցութիւնը կը թողու. վասնզի հոս անունները ստորագրութեան ձեւով առաջ բերուած են եւ նկատի առնուած չեն եպիսկոպոսներու պատուանդանները՝ տէր, սուրբ, ինչպէս կ'ընէ Ղ. Փարպեցի: Որով եթէ Փարպեցիին վաւերաթուղթ ալ ունեցած ըլլայ առջեւը, իր այս կերպովը ցոյց կու տայ թէ ազատօրէն դորձածած է զայն, եւ ոչ թէ հաւատարիմ կերպով մէջը բերած: Այս նկատուածները ինքնին բաւական է տկարացնելու մասամբ անոր արժէքը, Եղիշէի համեմատութեամբ: Բայց մենք կ'ուզենք

յատկապէս նկատել երկու հեղինակներու տարբերութիւնը՝ ժողովական եպիսկոպոսներու կարգի նկատմամբ, ուր շատ աւելի յայտնի կ'երեւի Եղիշէի առարկայականութիւնը Ղ. Փարպեցիի համեմատութեամբ:

Ղազար Փ. կաթողիկոսէն յետոյ հետեւեալ կարգով կը յիշէ Արտաշատի ժողովին մասնակցող եպիսկոպոսները.

- 1 - Սինեայ եպիսկոպոս Տէր Անանիա
- 2 - Արծրունեայ եպիսկոպոս Տէր Մուշէ
- 3 - Տարօնի եպիսկոպոս Տէր Սահակ
- ...
- 5 - Մանազկերտոյ եպիսկոպոս Տէր Մեղիշ
- 6 - Բաղրեւանդայ եպիսկոպոս Տէր Եղիշիկ, եւ այլն:
- ...

Իսկ Եղիշէ այս կարգով կը դասէ դասերը.

- 1 - Տարօնոյ եպիսկոպոս Սահակ
- 2 - Մանազկերտոյ եպիսկոպոս Մեղիշ
- 3 - Բաղրեւանդայ եպիսկոպոս Եղիշիկ
- ...
- 10 - Սինեայ եպիսկոպոս Անանիա
- 11 - Արծրունեայ եպիսկոպոս Մուշէ
- ...

Ինչպէս կը տեսնէք, երկու հեղինակներուն մէջ տարբեր կարգի վրայ դրուած են միեւնոյն եպիսկոպոսները. մենք միայն կը նկատենք առաջինները, թէպէտ բոլորին մէջ ալ կը տարբերին մեր հեղինակները. սակայն երբ առաջիններուն հարցը լու-

(21) Ղ. Փարպեցի, Անդ, էջ 138:

(22) Եղիշէ, Անդ, էջ 50:

ծենք՝ կը համարինք թէ միւսներուն ալ լուծուած կ'ըլլայ:

Ձեռք կարծեր թէ պատահական երեւոյթ մը ըլլայ Փարպեցիին քով Սինեայ եպիսկոպոսին առաջին տեղը դրուելը՝ յետ կաթողիկոսին. իսկ Եղիշէի քով նոյն տեղը Տարօնի եպիսկոպոսին վերապահուելը:

Անշուշտ եպիսկոպոսները իրենց ստորագրութիւնը դրած են այն կարգով որ կը պատշաճէր իրենց թեմերուն պատուոյ կարգին: Արդ հոս ալ երկու հեղինակներուն տարբերակը նկատելով պէտք է կըշտենք թէ ո՞վ անոնցմէ ստոյգը եւ հարազատը մեզի ներկայացուցած կրնայ ըլլալ:

Հ. Ներսէս Ակինեան դարձեալ ջատա-

Անանիա Սինեայ եպիսկոպոս
Մուշէ Արծրունեայ եպիսկոպոս
Սահակ Տարօնոյ եպիսկոպոս
...

գով կը կանգնի Փարպեցիի՝ հետեւեալ պատճառով. «Ղազարի ներկայացուցած ցանկի հարադատութեան վկայ է նաեւ այն պարագան, որ, նա, բարեկամը Մամիկոնեանց, նախաթող տեղին կը յատկացնէ Սինեայ եպիսկոպոսին: Որովհետեւ Սինեայ տանուտէրը Վասակ նոյն շրջանին Հայոց մարզպանն էր, բնականաբար եպիսկոպոսներու թուին մէջ ալ նախաթողը կը պատշաճէր Սինեայ»⁽²³⁾: Մենք կրնանք աւելցնել թէ Փարպեցիի ցանկին մէջ յաջորդ եպիսկոպոսներէն ոմանց կարգն ալ կը համապատասխանէ նախարարական տուններու կարգին. այսպէս՝

— Վասակ Սինեայ տէր
— Ներշապուհ Արծրունեայ տէր
— Վարդան Մամիկոնեից տէր
...

Սակայն այս պարագաները փաստեր չեն կրնար նկատուիլ Փարպեցիի արժանահաւատութեան, որովհետեւ ոչ մէկ ապացոյց ունինք, թէ եկեղեցական պատուոյ կարգը համաձայն էր նախարարական պատուոյ կարգերուն: Հ. Ակինեան այդ ապացոյցը կ'ուզէ թելադրել մեզի ըսելով. «Երբ մարզպանութեան իշխանութիւնը յանձնուեցաւ Մամիկոնեանց՝ միաժամանակ եպիսկոպոսական նախաթողն ալ վիճակուեցաւ Տարօնոյ եւ Մամիկոնեից եպիսկոպոսին. այսպէս 508ին Բարդէն կաթողի գումարած ժողովքին մէջ առաջին դահը յետ կաթողիկոսին դրուած է Ներշապուհ Տարօնոյ եւ Մամիկոնեից եպիսկոպոսը. նոյն նախադահութիւնը պահեցին Տարօնոյ եպիսկոպոսները մինչեւ 570»⁽²⁴⁾:

Բայց մենք չենք կարծեր որ եկեղեցական կարգերը այնքան յեղեղուկ վիճակ մը ունենային որ քաղաքական պարագաներու փոփոխութեամբ իրենք ալ փոխէին իրենց իրաւական կարգերը: Մամիկոնեանց Ներշապուհ եպիսկոպոսը, կաթողիկոսին աթոռակալը եւ խորհրդականը չեն զուի չնորհա Վահանի մարզպանութեան: Տարօնի թեմը իր գերազանցութեան դիրքը կը պահէր իր հինէն ժառանգած իրաւունքով. վասնզի ան արդէն չորրորդ դարէն նախաթող եւ նախապատիւ թեմ էր, եւ անոր համար Ե. դարուն, Եղիշէի ցուցակին մէջ՝ Արտաշատի ժողովքին նախաթող դրուած է եւ ամբողջ Ձ. դարուն զայն պահպանած:

Ահա փաւստոս ինքնին կը վկայէ Դ. դարուն համար թէ Տարօնի թեմը ինչ նշանակութիւն ունէր ամբողջ Հայ. եկեղեցւոյ նուիրապետութեան մէջ: «Ձայնու ժամանակաւ երթեալ հասանէր եպիսկոպոսապետն Վրթանէս ի մեծ յառաջին ի

(23) Հ. Ն. Ակինեան, «Եղիշէ Վրդ.», հատոր Բ. էջ 623:

(24) Հ. Ն. Ակինեան, Անդ:

մայրն Եկեղեցեաց Հայոց որ էր յերկրին Տարօնու»⁽²⁵⁾։ Նմանապէս Դանիէլ Ասորի եպիսկոպոսին համար կ'ըսէ. «Ունէր սա զաստիճան աթոռոյս գլխաւորութեան Տարօնոյ, ի մեծն եւ նախ առաջին եկեղեցին ի մայրն եկեղեցեաց ամենայն Հայաստանեայց»⁽²⁶⁾։ Եւ նկատելի է որ Դանիէլ, Ս. Գրիգորի աշակերտն էր եւ կաթողիկոսական փոխանորդ եւ այդ իսկ պատճառով իրեն յանձնուած էր Հայաստանի ամէնէն կարեւոր թեմը՝ Տարօնը։

Անոր հակառակ Սիւնեաց թեմը Ե. դարուն ստեղծուեցաւ եւ անոր առաջին եպիսկոպոսը եղաւ նոյնինքն Անանիան, որ Արտաշատի ժողովքին ալ ներկայ գտնուեցաւ։ Կորիւնի վկայութիւնը շատ նշանակալից է. ան կը պատմէ թէ Ս. Մեսրոպի օրով դեռ Սիւնիք առաքելավայր մըն էր եւ Մաշտոցի ջանքերով քրիստոնէութիւնը ունեցաւ իր կաթմակերպութիւնը այդ վայրենի աշխարհին մէջ, ինչպէս Կորիւն ինքնին կ'ըսէ. «Առաւել զգալանամիտ, զվայրենագոյն, զճիւղազարարոյ կողմանցն եւ այնչափ փոյթ ի վերայ ունելով եւ դայեկաբար սնուցանել եւ խրատել մինչեւ ի նոցունց իսկ ի վայրենեացն եպիսկոպոս տեսուէս եկեղեցւոյն Սիւնեաց կարգել, որոյ անուն կոչէր Անանիաս»⁽²⁷⁾։

Արդ ինչպէս կրնար տասը տարի հաղիւ անցած Սիւնեաց նորահաստատ թեմը նախապատիւ ըլլալ քան դարէ մը ի վեր գոյութիւն ունեցող եւ նախապատուութիւն վայելող Տարօնի թեմը։

Անցնինք յաջորդ թեմերու դիրքին։ Մանազկերտի թեմն ալ Փարպեցիի ցուցակին մէջ հինգերորդ տեղը կը զբաւէ, մինչ իր պատուոյ տիգն ըլլալու էր, Տարօնի թեմէն վերջ, ինչպէս Եղիշէ առաջ կը բերէ

իր ցանկին մէջ։ Վասնզի այս թեմն ալ Դ. դարուն գոյութիւն ունէր. եւ իբր նախապատիւ աթոռ յանձնուած էր Աղբիւնոս եպիսկոպոսին, որուն «Մեծ» տիտղոսը կու տայ Փաւստոս⁽²⁸⁾։

Եղիշէի ցուցակին մէջ Մանազկերտի թեմին կը յաջորդեն Բաղրեւանդի, Բըղնունեաց, Տայոց եւ Բասենոյ թեմերը, որոնք նոյնպէս Դ. դարուն գոյութիւն ունէին եւ անոնցմէ առաջինը, Բաղրեւանդի թեմը, կարեւոր թեմ մըն ալ էր, այնպէս որ Ս. Ներսէս զայն յանձնեց իր տեղապահին՝ Սադ եպիսկոպոսին⁽²⁹⁾։

Այս բոլորէն կրնանք հետեւցնել թէ Ղ. Փարպեցի Սիւնեաց թեմը նախապատիւ ընելով եւ յաջորդ եպիսկոպոսական աթոռներն ալ համաձայնեցնելով նախարարներու պատուոյ կարգին, չի ներկայացնիր Ե. դարու եկեղեցական իրաւակարգը ինչպէս որ էր, այլ ինչպէս ինքը կարծած է որ ան եղած ըլլար, քանի որ կէս դար վերջ պատմագրեց եւ այս կէտին մէջ իր վաւերաթուղթը ազատօրէն գործածեց։ Ընդհակառակն Եղիշէի ներկայացուցած եպիսկոպոսներու պատուոյ կարգը ոչ միայն համաձայն է Ձ. դարու թեմերու պատուոյ կարգին, ինչպէս ճշգրտ կը նկատէ Հ. Ակինեան, այլ նաեւ Դ. դարու պատուոյ կարգերուն ալ, ինչպէս վերը տեսանք։ Արդ շատ բնական է՝ որ ինչ էր իրաւական կարգերը Դ. եւ Ձ. դարերուն, նոյն եղած ըլլար անոնց միջանկեալ Ե. դարուն։ Ուստի անտեղի է ենթադրել թէ Թ. դարու խմբագիր մը հարկ տեսած ըլլայ, Արտաշատի ժողովքի պատմութիւնը գրած միջոց, Ղ. Փարպեցիէն քաղած եպիսկոպոսական թեմերը համաձայնեցնել

«Ձ. դարուն կանոնական ճանչցուած նախապատուութեան»⁽³⁰⁾։

Մեր կարծիքով հոս ալ Եղիշէ աւելի աւարկայապէս ներկայացուցած է իրերը քան Փարպեցին։ Եղիշէ սկիզբ դրած է Տարօնի, Մանազկերտի, Բաղրեւանդի, Բըղնունեաց, Տայոց, Բասենոյ թեմերը, որովհետեւ անոնք արդէն գոյութիւն ունէին Դ. դարուն իբր կարեւոր եւ նախապատիւ թեմեր. եւ իրենց նոյն կարգը պահեցին Ձ. դարուն ալ, ոչ թէ քաղաքական պարագաներու փոխուելուն համար, այլ իբրեւ շարունակութիւն Դ. դարու եղած կարգին։ Մինչ Սիւնեաց թեմը նոր հաստատուած Ե. դարու կէսերը, Արծրունեաց եւ Ռշտունեաց թեմերն ալ անծանօթ՝ նախապէս, դժուար էր թէ Արտաշատի ժողովքին մէջ նախապատիւ ըլլային քան վերը յիշուած թեմերը, ինչպէս Ղ. Փարպեցին կը դնէ եւ Հ. Ակինեան կը պաշտպանէ։

ՅՈՎԱՆՔ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅՐԱՐԱՏՈՅ

Վերջացնելու համար Արտաշատի ժողովքին հարցը՝ նկատենք նաեւ ժողովական եպիսկոպոսներու զլխաւորին շուրջ գոյութիւն ունեցող տարբերակն ալ։ Հոս ալ Ղ. Փարպեցի մեծապէս կը զարտուղի Եղիշէին, երբ կ'ըսէ. «Ս. Յովսէփ, որ թէպէտ եւ երէց էր ըստ ձեռնադրութեան այլ ըզկաթողիկոսութեան Հայոց զաթոռն ունէր ի ժամանակին»⁽³¹⁾։ Մինչ Եղիշէ նոյն անձին շուրջ սա պարզ բայց արտայայտիչ բացատրութիւնը առաջ կը բերէ. «Յովսէփ եպիսկոպոս Այրարատոյ»։ Այսպէս երկու հեղինակները, իրենց ներկայացուցած նամակին ստորագրող եպիսկոպոսներու ցանկին մէջ, անոնց զլխաւորին շուրջ բոլորովին տարբեր տեղեկութիւն

կու տան։ Մէկուն համար՝ Յովսէփ կաթողիկոս է, բայց տակաւին երէց մը. միւսին համար եպիսկոպոս՝ բայց Այրարատի թեմին։

Հարցը լուսաբանելու համար պէտք է դիմենք ժամանակակից պատմագիրներու, որոնք խօսած են Յովսէփի կաթողիկոսութեան շուրջ։ Անոնցմէ առաջինն է Կորիւն, որ Ս. Մեսրոպի մահը պատմելէ վերջ, կը տեղեկացնէ մեզի թէ Ս. Սահակի եւ Մեսրոպի փափաքն եղած էր որ Յովսէփ եւ Յովհան, երկու ընտրելագոյն աշակերտները, կաթողիկոսական աթոռին տեղապահ մնային։ Ահա Կորիւնի խօսքերը. «Եւ զլխաւորս՝ վերակացուս՝ տեղապահս յայտ արարեալ հարցն կատարելոց, որոց առաջինն Յովսէփ զլխաւոր ժողովոյն, եւ երկրորդն այլ աշակերտ Յովհան անուն»⁽³²⁾։ Այս տեղապահ երկու աշակերտներու անունին կը հանդիպինք յետոյ Շահապիւլանի ժողովքին մէջ, որու կանոններու հաւաքածոյին յառաջարանը կ'ըսէ թէ Յովսէփ եւ Յովհան, իբր գլխաւոր երէցներ, ներկայ գտնուեցան ժողովքին՝ ուրիշներու կողքին⁽³³⁾։ Հուսկ Ս. Խորենացի, իր պատմութիւնը կը վերջացնէ իմացնելով մեզի, թէ Ս. Մեսրոպի մահէն վերջ եպիսկոպոսապետութեան աթոռին յաջորդեց «Յովսէփ քահանայ ի Վայոց Ձորոյ ի Խողոցիմ գեղջէ»⁽³⁴⁾ իբր տեղապահ։ Սակայն այս երեք վկայութիւններն ալ, որքան որ կը խօսին Յովսէփի մասին, մեր խնդիրը բաց կը թողուն. որովհետեւ անոնք կը պատմեն Ս. Մեսրոպի մահուն անմիջապէս յաջորդող պարագաները, այն է Յովսէփի իբր տեղապահ յաջորդելը՝ նախորդ տեղապահին, Ս. Մեսրոպին։ Բայց թէ այս վի-

(25) Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1933, էջ 19։

(26) Փ. Բիւզանդ, Անդ, էջ 47։

(27) Կորիւն, «Վարք Մաշտոցի», Հրատ. Ֆրանկլինի, Երուսաղէմ, 1930, էջ 30։

(28) Փ. Բիւզանդ, Անդ, էջ 21։

(29) Փ. Բիւզանդ, Անդ, էջ 115։

(30) Հ. Ն. Ակինեան, Անդ, էջ 627։

(31) Ղ. Փարպեցի, Անդ, էջ 138։

(32) Կորիւն, Անդ, էջ 62։

(33) «Բազմավէպ» ձեռ. (1951), էջ 260, ծառայութիւն թիւ 19։

(34) Ս. Խորենացի, Պատմութիւն Հայոց, Գ. զերբ, զլ. Կէ։

ճակը շարունակեց յետոյ թէ ոչ. Կորինն եւ Մովսէս ոչինչ կ'ըսեն, վասնզի իրենց պատմութիւնը հոն կը վերջանայ: Իսկ Շահապիվանի ժողովքը կը հաստատէ նախ Կորինի վկայութիւնը, որովհետեւ հոս ալ խօսք կ'ըլլայ Յովսէփի եւ Յովհաննու մասին՝ իբր գլխաւոր երէցներու: Բայց անուղղակի կերպով կը զօրացնէ Եղիշէի տրւած տեղեկութիւնը, ինչպէս պիտի տեսնենք յետոյ:

Գալով հետագայ պատմիչներու, անոնք ալ երկուքի կը բաժնուին. ոմանք կ'աւանդեն թէ Յովսէփի եպիսկոպոսական աստիճան ստացաւ, իր ընտրութենէն վեց տարի վերջ. այսպէս Յովհան Կաթ. : Իսկ ուրիշներ ալ զբաղէս կը պաշտպանեն թէ Յովսէփի միշտ երէց մնաց, ինչպէս Մեսրոպ երէց, որ կ'ըսէ. « Ես Մեսրոպ աղղակից սրբոյն երիցու իմացուցանեմ վասն նորա, զոր ոմանք ասեն եթէ եպիսկոպոս զօլով նորա, չէ ճշմարիտ...: Ի չիթմանէ ժամանակին ոչ ժամանեաց ձեռնադրիլ Յովսէփի եպիսկոպոս կամ կաթողիկոս, այլ մնաց երէց եւ ի նմին վախճանալ»⁽³⁵⁾:

Նոր պատմագիրներէն ալ Չամչեան, Օրմանեան, Թուրքալի... կ'ընդունին Յովսէփի եպիսկոպոսապետութիւնը. իսկ Հ. Վ. Հացունի երկու հակառակ վկայութիւններ հաշտեցնել ուղելով, նախ իբր ստոյգ կ'ընդունի Ղազարի տրւած տեղեկութիւնը, այսինքն թէ Յովսէփի պարզ երէց մը մնաց մինչեւ մահը. եւ ապա Եղիշէի տուած «Եպիսկոպոս Այրարատոյ» տիտղոսը կը համարի պաշտօնին անունը եւ ոչ ձեռնադրութեան:⁽³⁶⁾

Հուսկ գալով Հ. Ն. Ակինեանի, ան Ղ. Փարպեցիի վկայութիւնը միայն ճշմարիտ կը համարի եւ Եղիշէի ըսածին առջեւ գը-

րեթէ գայթակղած կը մնայ. եւ անոր խմբագրողին հայ ծագումին վրայ կը կասկածի, որովհետեւ կ'ըսէ. «Նա հայ չըլնակէն շատ հեռու օտար չըջանակի մէջ ապրած ըլլալու է, գիտնալ չկարենալու համար թէ ինչ էր հայ եկեղեցւոյ իսկական պետին տիտղոսը». եւ բանասէր Հայրը շատ պաղ կը գտնէ Եղիշէի տուած «Յովսէփի եպիսկոպոս Այրարատոյ» բացատրութիւնը, մինչ կը սպասուէր, կ'ըսէ, որ գրած ըլլար « Յովսէփի երէց Կաթողիկոս Հայոց Մեծաց »⁽³⁷⁾:

Ինչպէս կը տեսնուի վերի ըսուածներէն, Յովսէփի մասին եղած տարաձայնութիւնը գոյութիւն ունի միայն Ղ. Փարպեցիի եւ Եղիշէի միջեւ: Ասոնցմէ առաջ գրողները, Կորին կամ Խորենացի, խնդիրը բաց կը թողուն. իսկ վերջէն գրողները կը գտնուին մէկուն կամ միւսին աղղեցութեան տակ, ուստի անոնք ալ խնդիրը լուծելու չեն նըպաստեր:

Սակայն երկու հեղինակներու մեզի տրւած տեղեկութիւնները կշռելով կը գտնենք որ Եղիշէ լաւագոյն կերպով արտայայտած է Յովսէփի կաթողիկոսութեան պարագան քան Ղ. Փարպեցին:

Վասնզի Կորինի ըսածէն կ'իմանանք թէ Սահակ եւ Մեսրոպ ձեռնելու պահուն փափաք յայտնած են որ Յովսէփի եւ Յովնան «Գլխաւոր վերակացու եւ Տեղապահ» մընային: Մ. Խորենացին բան մը աւելի ըսելով կ'աւելցնէր թէ Յովսէփի քահանան կաթողիկոսական աթոռին յաջորդեց «տեղապահութեամբ»:

Ի՞նչ էր պատճառը որ Յովսէփի տեղապահ միայն նշանակուած էր եւ ոչ բուն կաթողիկոս: Ներկայ պատմագետները հետեւեալ տեղեկութիւնները կու-

տան մեզի. Հ. Վ. Հացունի պատճառը կը համարի Կեսարիոյ ձեռնադրութեան մտահոգութիւնը՝ որ խնդիրը առկաի կը ձգէր⁽³⁸⁾: Հ. Ներսէս Ակինեան Տիգրանի հաւանութեան պայմանը կը մատնանչէ, որուն համար ի դուր աշխատած է Յովհան⁽³⁹⁾: Իսկ Ե. Տէր Մինասեան կը տեսնէ ուրիշ ընկերային հարցեր, այն է Կաթողիկոսական կալուածներու ժառանգական հարցերը, որոնք տակաւին լուծուած չըլլալով Յովսէփի չէր կրնար կաթողիկոսի տիտղոսը վայելել⁽⁴⁰⁾:

Անշուշտ այս բոլոր պարագաները աղղեցին որ կաթողիկոսական հարցը առկաի մնար ժամանակ մը. բայց դժուար է ենթադրել թէ տասնեւերկու տարի այնպէս անորոշ վիճակ մը ունեցած ըլլայ Յովսէփի կաթողիկոսութիւնը, եւ ինքը իբր պարզ երէց մը տեղապահ մնացած ըլլայ Աթոռին վրայ: Այդ լուծումը, մենք կը կարծենք թէ գոյացած ըլլայ Շահապիվանի ժողովքին, որ ինչպէս կանոնադիրքնէն ոմանք կ'անուանեն, «Հայոց վարդապետաց» ժողովքն էր եւ ոչ որոշ կաթողիկոսի մը, քանի որ ղեկ կաթողիկոսական հարցը լուծուած չէր: Բայց, ինչպէս վերը տեսանք, այդ ժողովքին մասնակից եղան երեք երէցներ ալ, Մելիտէ, Երեմիա եւ Գաղ, որոնք իբր եպիսկոպոս դուրս ելան զրաւելով թափուր մնացած թեմեր. որով եւ Արտաշատի ժողովքին անոնք բաղմեցան եպիսկոպոսներու կարգին, ինչպէս արձանադրած են թէ՛ Եղիշէ եւ թէ՛ Ղ. Փարպեցի: Արդ շատ հաւանական է եւ հասկնալի, որ Յովսէփի «Գլխաւոր երէցն» ալ անոնց հետ ձեռնադրուած ըլլայ եպիսկոպոս եւ գործնականին մէջ եղած կաթողիկոս. ա-

ռանց ունենալու Կեսարիոյ ձեռնադրութիւնը, որու մասին անշուշտ կորսնցուցած էին յոյսերնին քաղաքական այնպիսի անընդատ պայմաններու մէջ. եւ ո՞վ ալ Տիգրանի հաւանութեան ղեմել կրնար, գիտնալով թէ ո՞րքան ծանր պայմաններ պիտի դնէր իրենց վրայ, ինչպէս եղած էր Ս. Սահակի ատեն, եւ պիտի ըլլար յետոյ Գիւտ կաթողիկոսին ալ: Ուստի բնական կու գայ որ վեց տարուան զուր սպասումէն վերջ վճռական քայլ մը առնէին կաթողիկոսական հարցը լուծելու համար, ինչպէս Շահապիվանի ժողովքի կանոններու նախարանը եւ Եղիշէի տուած բացատրութիւնը կը թելադրեն արդէն: Այսու, երբ Յովսէփի իբր Արտաշատի ժողովքին գըլխաւորը, կ'ուղղէր իր նամակը Յովկերտի, պիտի չհամարձակէր ինքզինքը անուանել «Հայոց Մեծաց Կաթողիկոս», ինչպէս Հ. Ակինեան կ'ուզէ որ ըրած ըլլար, այլ պիտի բաւականանար պարզ բայց արտայայտիչ ձեւով կոչել ինքզինքը «Եպիսկոպոս Այրարատոյ»: Եւ արդէն Այրարատի եպիսկոպոս ըլլալը համազօր էր «Հայոց Մեծաց Կաթողիկոս» ըլլալուն: Ասով ո՞չ Տիգրան պիտի խրոչէր առանց իր հաւանութեան՝ անոր կաթողիկոս տիտղոսը գործածելուն եւ ոչ իր հպատակներու ականջին պաղ պիտի դար երբ ինքզինքը պարզապէս «Յովսէփ Երէց» մը ներկայացնէր:

Ահա ուրեմն թէ ինչ պարագաներու եւ պայմաններու տակ կը գտնենք Յովսէփի տասնեւերկու տարուան անորոշ եւ մութ կաթողիկոսութեան չըլնալ, որու մասին կը կարծենք թէ աւելի լոյս կը տփռէ Եղիշէի լոկ « Յովսէփի եպիսկոպոս Այրարա-

(38) Հ. Վ. Հացունի, Անդ, էջ 233:

(39) Հ. Ն. Ակինեան, «Շահապիվանի ժողովքի կանոնները», Մխիթար Տօնադիրք, 1949, էջ 79-80:

(40) Եղիշէի Վարդանանց պատմութիւնը, Թրգ. Եր. Տէր Մինասեան, Գահիրէ, 1950, Ներածութիւն էջ 78:

(35) Հմմտ. Հ. Վ. Հացունի «Կարեւոր խնդիրներ Հայ Եկեղեցւոյ պատմութենէն», Վենետիկ, Ս. Ղազար, 1927, էջ 232-233:

(36) Հ. Վ. Հացունի, «Կարեւոր խնդիրներ», էջ 231:

(37) Հ. Ակինեան, Անդ, Հտ. Բ. էջ 619-620:

տոյ » բացատրութիւնը՝ քան Ղ. Փարպեցիի վեց անգամ կրկնածը. «Թէպէտ զձեռնադրութիւն երիցութեան ունէր այլ զկաթողիկոսութեան զաթոռն ունէր Հայոց ի ժամանակին»։ որու մասին կարծես ինքն ալ կը տարակուսի եւ իր ընթերցողին կասկածն ալ փարատելու համար կ'ըսէ անգամ մըն ալ. « զարդարեւ կաթողիկոսն Հայոց »:

Ուստի կրնանք եզրակացնել թէ Եղիշէ այս խնդրին մէջ ալ շատ աւելի տեղեակ է եւ աւելի մօտ ապրած դէպքերու քան Փարպեցին՝ որ յիստուն տարի վերջ արձանագրած է պատմութիւնը, երբ շատ փոխ-

ուած էին պարագաները: Եւ թէպէտ Եղիշէ՝ պատմութեան գիրք մը չէ որ գրած է, բայց իր տուած տեղեկութիւնները ցոյց կու տան թէ ինք «օտար մը չէ եւ ո՛չ ալ Հայ շրջանակէն հեռու ապրած» որպէսզի չկարենար գիտնալ Հայ կաթողիկոսին իսկական տիրոջը. այլ ապրած է պատմական այն շրջանին՝ որու մասին կը գրէ եւ շատ լաւ գիտցած է արտայայտել նոյն ժամանակի բացառիկ գիրքի մէջ գտնուող մեր եզակի կաթողիկոսին տիրոջը, իր «Յովսէփ Եպիսկոպոս Այրարատոյ» բացատրութեամբ:

Հ. Պ. ՀԱՄԷԼԵԱՆ

Ս Ո Ր Ե Ն Ե Ն Յ Ո Յ

Սորբենքոյ, ծաղկաշաղախ, դալարագեղ ավերով,
Երգերըդ շաղ եմ գալիս պայծառ հորիզոններում,
Ալիքներդ եմ վազվզում փրփուր-փրփուր ծափերով,
Գիթարի ձայնն է կաթում քո առափնեայ ջրերում:

Ո՛րքան սէր կայ քո ծոցում ու ո՛րքան երգ՝ քո գրկում,
Քո լանջերում, քո ծովում, քո գեղուն հովերի մէջ,
Աղջիկներիդ սրտերում, տղաներիդ տափ հոգում,
Սորբենքոյ, ջինջ մեղեդի՛, սիրակոհակ, սիրաէջ:

Դու՝ համակ կենսակարկաչ, չփնաղ ու գեղածիծաղ,
Անուրջ ու ցոլփ կայ փռուած ավունքներում քո լուսէ,
Ա՛յնքան շող ունես, արե՛ւ, ու ա՛յնքան խիղճ ու ծիծաղ,
Սորբենքոյ, դու՝ վառ հրմայֆ, Սորբենքոյ, դու՝ երգ ու սէր:

Սորբենքոյ

Դեի

ԲԺՇԿԱԿԱՆ ՏՈՒԵԱԼՆԵՐ ՆԱՐԵԿԱՅ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ՄԷՁ

Մարդկային մարմնին քառասոր կազմը. — Հոգին եւ մարմինը — հոգեվարքն ու դեակնացած մարմինը:

(Շար. Բազմ. 1951. Թիւ 7-8, էջ 156)

Ա.

Նարեկացիին ողբերգութեան մատենանին մէջ, բժշկական գիտելիքներու հետ կապ ունեցող հարցերը, հպանցիկ յիշատակութիւններու կարգին դասուած են:

Հակառակ այդ հանգամանքին, բժշկութիւնը հոն բոյն գտած է իր բազմազանի ճիւղաւորումներովը, հոգեբանական հարցերու առնթներ:

Այդ կարգի յիշատակութիւններ ցրուած կը գտնենք աղօթամատենին զանազան էջերուն մէջ, ու գրի առնուած են գրական այնպիսի հոգեչունչ ոճով մը, որ գիտական չոր ու ցամաք հարցերը, տաղանդաւոր քնարերգական գրչին տակ, կը կորսնցնեն իրենց անհրապոյր հանգամանքը, կը պճնուին իմաստասիրական եւ բանաստեղծական յղացումներու տարազովը, ու կը վերածուին կատարեալ վայելքի մը:

Մարդկային կազմին նուիրուած հատուածը, իր ամբողջութեանը մէջ, այնպիսի՝ հրաշակերտ քանդակ մըն է, որ կրնայ ներշնչման աղբիւր դառնալ նկարիչին եւ արձանագործին, մարդ էակին հոյակապ կերտուածքը իր ամենացալոտն գիծերովը պատկերացնելու համար:

Ահա՛ այդ հատուածը՝ Թորգոմ Սրբազան Գուշակեանի կողմէ աշխարհաբարի վերածուած.

«Կանգնած՝ գեղ կրող երկու ոտներու վրայ, որոնք միաբան եւ համակցորդ են

իրարու, բայց իսկապէս հրեշտակի ձեւով կառուցուած եւ դուն, երկնահայեաց դիրքովդ եւ գոյգ բազուկներու վերամբարձ քեւերովդ...: Բոլորակ գլուխդ, ինչպէս բազմաստեղն քերան փրփուր, մարմինիդ աշտանակին վրայ հաստատուեցաւ, որպէսզի տաճարին աշտանակին օրինակին շնորհիւ գլատուած տեսնելէ չը դադրիս, եւ անապական բաներու վրայ խորհիս: Բանականութեան պատիւով կրկնապէս նախացար, որպէսզի քեզի շնորհուած բանաստեղծութեանց գերազանցութիւնը համարակ լեզուով խօսիս: Ձեռքիդ եւ մատներուդ մեղ մեղ կազմութեամբը՝ արեւատական գործեր յօրինելու սահմանուեցար, ու այդ տեսակէտով, կերպով մը Աստուծոյ ամենաբաշխ աջին մամուլիւնը ունենալով վրադ, աստուած կոչուեցար: Երեւ հարիւր վաթսուն յօդուածներով շաղկապուեցար, աւելի ունենալով տակաւին՝ հինգ զգայարաններու զգայուն մասերը, եւ այս՝ որպէսզի մարմինիդ արտաքին նիւթական կազմութիւնը անիմատ չերեւի մտքիդ. այդ ամէնուն մէջ կան որ խոշոր են եւ գորաւոր, կան որ փոքր են եւ պիտանի, կան որ կարծրակերտ են եւ զգայուն, կան ալ որ կարեկան են եւ ամօքական: Իսկ այս կազմաւորութեան բացատրութիւնը, ո՛վ իմ եղկելի անձս, քու մէջդ նկատուած է արդէն իբրեւ անջրնջելի արձանի մը վրայ, եւ է այս՝ քե՛ ժամանակին ամենափոքր մասը, եւ օրե-